ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

13 հոկտեմբերի 2022թ. թիվ 1076

Մ. ԽԵՉՈՒՄՅԱՆԻՆ ՎՐԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ, 12-րդ և 22-րդ կետերով, հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի հոկտեմբերի 13-ի N ԳՍ/17.3/27427-2022 գրությունը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ եմ.

1. Լոռու մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Միեր Խեչումյանին ս/թ հոկտեմբերի 17-ից 19-ը ներառյալ գործուղել Վրաստանի Հանրապետություն՝ Եվրոպայի խորհրդի անդրսահմանային համագործակցության Առաջնորդության ակադեմիայի (Leadership Academy) եռաստիճան դասընթացի երկրորդ փուլին մասնակցելու համար:

2. Մ.Խեչումյանի՝ Վրաստանի Հանրապետություն գործուղման ծախսերը կատարվելու են հրավիրող կողմի միջոցների հաշվին:

3. Մ.Խեչումյանին՝ գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություն ներկայացնել Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղարին:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

13/10/2022

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ

2022թ. հոկտեմբերի 13
ք.Վանաձոր